

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ»
ՀՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի հունվարի 13-ի թիվ 4-Ա
հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԶԱՏԱՆԻ ԱՐՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ 0,5 ԴՐՈՒՅՔ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲՍՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

N	Թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը
1	2	3	4	5
1	<p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան (0,5 դրույք)</p>	<p>1) Որակավորման պահանջները Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն:</p> <p>2) Ընդհանրական պահանջները Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա, տիրապետի ա/ «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լիցենզավորման մասին» «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները. բ/ նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր. գ/ ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր</p>	<p>Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, 2) դատական կարգով զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, 3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը, 4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն</p>	<p>1) դիմում (Ձև1) 2) անձը հաստատող փաստաթուղթ. 3) կրթության մասին փաստաթուղթ 4) աշխատանքային ստաժի մասին տեղեկանք/առկայության դեպքում/ 5) ինքնակենսագրություն (ձև4) 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման</p>

		մանկավարժության, անձի և դիֆերենցիալ հոգեբանության, տարիքային և մանկան հոգեբանության, սոցիալական հոգեբանության հիմունքները: դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին:	կատարելու համար:	վկայական, 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
		Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:		Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
2	Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը	Դիմումների և փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները
	Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր, 19 փողոց, 17/3 շենք Օրը՝ 2026 թվականի փետրվարի 16-ին, ժամը 12:00	Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ 19 փողոց, 17/3 շենք Հեռ. 094002600 Հարցաշարերը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվականի N1981-Ա/2 հրաման: Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի		2026 թվականի հունվարի 14-ից փետրվարի 11-ը ներառյալ